**Արձանագրություն N 2**
**«ՄԻՊԱ-ՇՀԱՊՁԲ-15/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստի**

*Երևան, Պուշկինի 56 ա*

«07» «04» 2017թ.
ժ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մարտիրոս Ներսիսյանը,

Հանձնաժողովի անդամներ՝ Մարիաննա Կատվալյանը, Վահան Միքայելյանը, Տիգրան Մելքոնյանը և Անի Գևորգյանը,

Հանձնաժողովի քարտուղար՝ Արմինե Նամալյանը

**I. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին**
(Մ. Ներսիսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.
ա/ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1. <<Շուշան Տեխնիկս>> ՍՊԸ,
2. <<Երևան Տելեկոմ Սոլուշնս>> ՍՊԸ,
3. <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ

բ/ մասնակիցների կողմից առաջարկված գները.

ՀՀ դրամ

| Չափաբաժին | Նախահաշվային գինը (ՀՀ դրամ) | Մասնակիցների անվանումները | Գնային առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Գին (առանց ԱԱՀ) | ԱԱՀ | Գին (ներառյալ ԱԱՀ) |
| 1 | 140000 | <<Շուշան Տեխնիկս>> ՍՊԸ | 280000 | 0 | 280000 |
| 2 | 160000 | <<Շուշան Տեխնիկս>> ՍՊԸ | 160000 | 0 | 160000 |
| | | <<Երևան Տելեկոմ Սոլուշնս>> ՍՊԸ | 159800 | 0 | 159800 |

2. Հրավերով (ծանուցումով) սահմանված՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով (ծանուցումով) պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով (ծանուցումով) սահմանված պայմաններին նախնական տվյալներով.

- համապատասխանում են <<Շուշան Տեխնիկս>> ՍՊԸ-ի և <<Երևան Տելեկոմ Սոլուշնս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը,
-չի համապատասխանում <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հետևյալ հիմնավորմամբ.
գնային առաջարկը ներկայացվել է ԱԱՀ-ով (ՀՀ կառավարության և Միավորված ազգերի փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակի միջև 2004թ նոյեմբերի 22-ին

...ված համագործակցության համաձայնագրի 8-րդ հոդվածի համաձայն՝ գնումը ազատված է ԱԱՀ-ից):

Համաձայն Հրավերի առաջին մասի 7.1.1 կետի՝ հանձնաժողովը որոշեց մերժել <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

**3**. Ընդունել ի գիտություն, որ.

- հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**4**. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա նախնական տվյալներով.

1-ին չափաբաժնի համար

մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցել է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2-րդ չափաբաժնի համար

ա) I տեղ զբաղեցնող է ճանաչվել <<Երևան Տելեկոմ Սոլուշնս>> ՍՊԸ-ն, II տեղ՝ <<Շուշան Տեխնիկս>> ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

**5**. Հաշվի առնելով, որ 1-ին չափաբաժնի համար մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցել է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, հետևաբար, համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետի 5-րդ մասի, 2017թ-ի ապրիլի 12-ին ժամը 11:00-ին կվարվեն բանակցություններ գների նվազեցման նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

**Նախագահ՝______________________ Մ. Ներսիսյան**

**Հանձնաժողովի անդամ՝______________________ Մ. Կատվալյան**

**Հանձնաժողովի անդամ՝______________________ Վ. Միքայելյան**

**Հանձնաժողովի անդամ՝______________________ Տ. Մելքոնյան**

**Հանձնաժողովի անդամ՝______________________ Ա. Գևորգյան**

**Քարտուղար՝______________________ Ա. Նամայան**